



**ԵԱՀԿ**

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**



Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող Իրավաբանների հայկական ասոցիացիա	Գործընկեր Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Իրականացնող «Գյումրիու Երիտասարդ Քրիստոնեական Ասոցիացիա «ՖԼՈՐԱ» ՀԿ	Գործընկեր «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» ՀԿ
---	---	---	---	--	---

# Զ Ե Կ ՈՒ Յ Ց

## *«ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգի» արդյունքների*

ք. Գյումրի

2016թ.

## Չ Ե Կ ՈՒ Յ Յ

«ԲՍՓՀ գործառույթների մոնիթորինգ» ծրագիրը իրականացրել է «Գյումրու երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,495,000 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության հյուսիսային տարածաշրջանում տեղակայված գործակալությունների մոնիթորինգ (այսուհետ՝ ԲՍՓՀ), որի արդյունքները ամփոփված են սույն զեկույցում:

## Նախապատմություն

Դեռևս 2012թ. հոկտեմբերի 3-ին՝ ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հրավիրած հրատապ խորհրդակցության ժամանակ հաշմանդամության ոլորտում տիրող իրավիճակը որակել էր խայտառակ: Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել էին ընթացակարգային, կազմակերպչական և գործավարական բնույթի թերություններ և կոռուպցիոն ռիսկեր:

Կոռուպցիոն ռիսկերն էին /մեջբերում/.

1. Ըստ ստացված տեղեկությունների բժշկասոցիալական փորձաքննության գործառույթներում առկա են կոռուպցիոն ռիսկեր, որոնք կրում են համատարած բնույթ, ընդ որում՝ ռիսկերը հավասարապես առկա են ինչպես բուժհաստատություններում, որտեղ 0-88 ձևը տրամադրելուց պահանջում են 5.000 - 20.000 դրամ, այնպես էլ ԲՄՓՀ-ներում, որտեղ պահանջվող ապօրինի գումարի չափը կազմում է 15.000 - 35.000 դրամ, իսկ հաշմանդամության ակնհայտ բացակայության դեպքերում ԲՄՓՀ դրական որոշման համար՝

150.000-200.000 դրամ (վերջիններս սակայն՝ մասսայական բնույթ չեն կրում):

2. Հաշմանդամության հիմնականում 3-րդ խումբ հնարավոր է ձեռք բերել 1 ամսվա թոշակի չափով վճարում կատարելու միջոցով: Այս դեպքերում գործարքն իրականացվում է անձնագրի կամ աշխատանքային գրքույկի միջոցով գումարի փոխանցման ճանապարհով: Ըստ կատարված հարցումների՝ դիմումատու-թոշակառու մի շարք քաղաքացիներ տարիներ շարունակ հերթական փորձաքննության ժամանակ վերը նշված ձևով հանձնաժողովին են փոխանցել իրենց ամսական թոշակի չափին համապատասխանող գումար և ստացել հաշմանդամության խումբ, իսկ որոշ դեպքերում էլ՝ թոշակից պակաս գումար փոխանցելու պատճառով, հաշմանդամ լինելով հանդերձ, զրկվել են հաշմանդամության խմբից: Հաշմանդամության կարգ չստացած դիմումատուների հարցումների արդյունքում պարզվեց, որ մի շարք դեպքերում դիմումատուները հաշմանդամ չեն ճանաչվել՝ պահանջվող գումարները չվճարելու պատճառով: Ընդ որում, քաղաքացիները նշում են, որ ԲՄՓՀ անդամներից մեկը

սովորաբար անուղղակի կերպով մատնանշում է ապօրինի գումարով հաշմանդամության ստացման հնարավոր ուղին:

Այս ամենը խիստ զայրացրել էր ՀՀ վարչապետին և նա հանձնարարել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանին՝ ծանոթանալ ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության նյութերին և բոլոր այն կետերում, որտեղ կան կաշառակերության դեպքեր, իրականացնել կադրային փոփոխություններ:

.....

Կադրային փոփոխությունները կատարվեցին: Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետ Միքայել Վանյանը և մի շարք այլ աշխատակիցներ աշխատանքից ազատվեցին: Թվում էր, թե այս հաստատություններում կաշառակերությունը կվերանա կամ գոնե կնվազի, սակայն մեր կազմակերպություններ դիմած քաղաքացիները պնդում են, որ կաշառակերությունը Գյումրու բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներում շարունակվում է նախկին մասշտաբներով, և հաշմանդամության կարգը հաստատելու համար շարունակում են գումարներ վերցնել:

### **Նպատակը և մեթոդաբանությունը**


Սույն հետազոտության նպատակն է գնահատել կոռուպցիայի մակարդակը Շիրակի մարզի բժշկասոցիալական փորձաքննական գործակալության հանձնաժողովների գործառույթներում:

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- Խորհրդատվության տրամադրում և տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակում:
- Տեղեկության հավաքագրում՝ հիվանդներին այցելությունների և հարցազրույցների միջոցով:
- Ստացված տեղեկությունների որակական գնահատում և վերլուծություն:

### **Մոնիթորինգի արդյունքները**

Հարցվածների ընդհանուր թիվն է՝ 600 քաղաքացի (221-ը՝ տղամարդ, 379-ը՝ կին), բարձրագույն կրթություն ունեն 190-ը: Քաղաքացիներից 23-ը աշխատանք ունեն, 587-ը՝ կենսաթոշակի տարիքի են կամ գործազուրկ են: Հարցաթերթիկներն անանուն են, այնուամենայնիվ 13 մարդ նշել է իր անուն, ազգանունը:




Խորհրդատվության տրամադրում և տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակում

Տեղական հեռուստատեսությամբ և ռադիոյով պարբերաբար տրվել են հայտարարություններ այն մասին, որ ԲՍՓՀ խնդիրներ ունեցող քաղաքացիները կարող են դիմել կազմակերպության գրասենյակ: Դիմողները ստացել են անհրաժեշտ խորհրդատվություն, սիրով մասնակցել են հարցազրույցին, տրամադրել են անհրաժեշտ տեղեկությունները:

Տեղեկության հավաքագրում՝ այցելությունների և հարցազրույցների միջոցով.


Հարցումն իրականացվել է հաշմանդամություն ճանաչման համար Գյումրի-1 և Գյումրի-2 ԲՍՓՀ ղիմած, փորձաքննություն անցնող անձանց հետ՝ իրենց բնակարաններում և Գյումրու «Սամարիթեր» հիվանդանոցում 2016թ. հունիս և հուլիս ամիսներին:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 600 անձ՝ տարիքային հետևյալ համամասնությամբ.



Այն հարցին՝ «Ո՞նց եք ձեռք բերել 0-88 ձևը բուժհիմնարկից (գումար պահանջել են)», հարցվողների 90% - ը պատասխանել է՝ այո:





Հաջորդ հարցը վերաբերվել է ԲՄՓՀ-ին՝ «Ո՞նց են անցել հանձնաժողովի նիստերը (գումար պահանջել են)»:

Պատասխանը բացարձակապես նույնն է՝ այսինքն 0-88 ձևը գումարով ձեռք բերողը գումար վճարել է նաև հանձնաժողովին:

## **Եզրակացություն**

Այսպիսով՝ հաշմանդամության ճանաչման գործընթացը հանրային ծառայությունների այն ոլորտներից է, ուր կոռուպցիոն երևույթները ճշացող են, ինչը բազմիցս արծարծվել է թե՛ կառավարական մակարդակում, և թե՛ շահառուների ու ՀԿ-ների շրջանում: Պատասխանատվության առումով առկա է պատկան մարմինների որոշակի անգործություն: Ոլորտում տիրում է անպատժելիության մթնոլորտ:

## **Առաջարկություններ**

1. Բարձրացնել թափանցիկությունը հաշմանդամության ճանաչման գործընթացում, ստեղծել հանրային վերահսկողության գործուն մեխանիզմներ: Ճիշտ է ներկայումս ՀՀ կառավարության որոշմամբ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են դիտորդի կարգավիճակով մասնակցել բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին, սակայն դիտորդի

կարգավիճակը բավարար չէ գործընթացների վրա լիարժեք ազդելու: Այդ պատճառով էլ շատ հասարակական կազմակերպություններ պարզապես չեն ցանկանում մասնակցել փորձաքննություններին:

2. Հստակեցնել հաշմանդամության ճանաչման չափորոշիչները, որպեսզի բացառվի նույն ախտորոշման դեպքում բժշկասոցիալական փորձաքննության մասնագետների տարբեր մոտեցումներ ցուցաբերելը՝ կենսագործունեության սահմանափակման աստիճանները որոշելիս:
3. Ստեղծել բողոքարկման գործուն մեխանիզմներ:
4. Կիրառել պատասխանատվության մեխանիզմներ:
5. Կա առաջարկություն նաև՝ ընդհանրապես վերացնելու գործակալությունը և հաշմանդամության ճանաչման գործընթացը վստահելու հիվանդին բուժող բժիշկներին:

## Աշխատանքային խումբ՝

Սվետլանա Գրիգորյան  
Մարգարետունի Զադոյան  
Վիկտորիա Եղոյան  
Աստղիկ Գրիգորյան  
Ալինա Պետրոսյան  
Իսաչիկ Մկրտչյան  
Աննա Թադևոսյան  
Ստելլա Պետրոսյան

«Գյումրու Երիտասարդ Կանանց Քրիստոնեական  
Ասոցիացիա ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպություն

«Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության  
կենտրոն» հասարակական կազմակերպություն

ՀՀ, ք. Գյումրի, Կրիտյան 12

Հեռախոս՝ +37493368722; +37493400325



**ԵԱՀԿ** Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



**Ինֆորմացիոն Ազատութեան ԿԵՆՏՐՈՆ**



Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա	Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Իրականացնող՝ «Գյումրու Երիտասարդ Քրիստոնեական Ասոցիացիա «ՖՆՈՐԱ» ՀԿ	Գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» ՀԿ
---	---	--	--	--	--

Սույն զեկույցը տպագրվել է «ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում, որն իրականացրել է «Գյումրու Երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖՆՈՐԱ» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

Զեկույցը վաճառքի ենթակա չէ: Զեկույցում ամփոփված մոտեցումները աշխատանքային խմբին են և կարող են չհամընկնել

Եվրոպական միության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունների տեսակետներին: